



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material


Գործեր շր.

Դ-ԱՆԿՈՒ ԱՆՄՏԸ

891. 71

Գ-83

1904թ



Համար 12
Ազգային



ՄԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ԴԱՆԿՈՒ ՄԻՐՏԸ

Թարգ.

ԱՐՁԱԿ ԱԹԱՅԵԱՆ .

ԳԻՆՆ Է 3 ԿՈՊ.

№ 9

891.71-3
Գ-85

1904

891.71
9-83

19 256
1904

և՛

ՄԱԿՍԻՄ ԳՕՐԿԻՅ

√
15

ԳՆԵԿՕՒ ՍԻՐՏԸ

Թարդ.

ԱՐՁԱԿ ԱԹՆՅԵԱՆ

№ 9.

229

Արտատպ. "ՄՈՒՐՃ" անադրից

ԹԻՖԼԻՍ

Տպարան Մոլոտև Վարդանանյի
1904

71

2 1 MAR 2013

10673

7/21

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Доз. Цензурою 12 Марта, 1904 г., Тифлисъ.



2456
38

27 AUG 2006

891/71-3

9-185

19 NOV 2010

Ք Ա Ն Կ Օ Ի Ս Ի Ր Տ Ը

Պատաս. Իգերգիյի գոյցներից

Ծովից բարձրանում էր ամպակոյտը, սև, ծանր, մռայլ ձևերով, լեռնաշղթայի նման: Նա սողում էր դեպի դաշտավայրը: Ամպակոյտի վերին մասից անջատում էին ամպի կտորներ, նրանից առաջ էին անցնում և հանգցնում աստղերը ձեկը միևսի յետևից: Ծովն աղմկում էր: Մեղքից, ոչ ճեռու, խաղողի որթերի մեջ համբուրում էին, փսփում ու հառաշում: Խորը դաշտավայրում ունում էր մի շուն... Օդը դառնում էր հեղձուցիչ և մարդի ջղեր էր գրգռում ունգները խաղտացնող մի տարօրինակ հոտով: Ամպից երկրի վրայ էին ընկնում պուերները թանձր շարքեր և սողում նրա վրայով, սողում, անհետանում, նորից յայտնւում... Լուսինը մարել էր, նրա տեղը մնացել էր միայն օպալի մի պղտոր բիծ, այն էլ երբեմն ծածկւում էր ամպի կապտաւ կտորով: Եւ դաշտա-

վայրի հեռաստանում, այդժամ արդէն մութ ու
ահալի, կարծես տապա արած և իր մէջ մի
բան թագցրած, բռնկում էին մանրիկ կա-
պուտակ կրակներ: Մերթ այստեղ, մերթ այն-
տեղ մի ակնթարթ յայտնում ու հանգչում
էին, կասես թէ մի քանի մարդ՝ դաշտավայ-
րում ցրած իրարից հեռու՝ մի բան էին որո-
նում նրա մէջ՝ վառելով լուցկիներ, որոնց իս-
կոյն հանգցնում էր քամին: Դա կրակի շատ
տարօրինակ լեզուակներ էին, որոնք յիշեցնում
էին հէքիաթային ինչ-որ մի բան:

— Տեսնում ես դու կայծեր, — հարցրեց
ինձ Իդերգիլը:

— Հրէն նրանք, կապոյաները, — նրան
մատնացոյց անելով դաշտավայրն՝ ասացի ես:

— Կապոյաները: Հնա, այդ նրանք են...
նշանակում է՝ թռչում են էլի... Հնա... Ես այ
արդէն շեմ տեսնում էլ նրանց: Չեմ կարող
այժմ ես շատ բան տեսնել:

— Ո՞րտեղից են այդ կայծերը, — հարցրի
պառաւելց:

Ես առաջ քիշումիշ լսել էի այդ կայծե-
րի ծագման մասին, բայց ուզում էի իմա-
նալ, թէ պառաւ Իդերգիլին ինչ կասէ նոյն
բանի մասին:

— Այդ կայծերը Դանկօի վառուղ սրտից
են: Աշխարհիս երեօին մի սիրտ է եղել, որը
մի անգամ բռնկել է կրակով... Եւ ահա դրա-
նից են այդ կայծերը: Ես քեզ կպատմեմ

այս բոլորի մասին. . . էլի հին հէքիաթ է...
Հի՛ն է էլի, հի՛ն: Տեսնում ես, թէ հնու-
մըն ինչքան բան կայ... Բայց այ այժմ մի
այնպիսի բան չկայ — ո՛չ գործեր, ո՛չ մարդիկ,
ո՛չ այնպիսի հէքիաթներ, ինչպէս հնումը...
Ինչո՞ւ: Ապա մի ասա: Չես կարող ասել... Դու
ի՛նչ գիտես: Ի՞նչ գիտէր դուք, բոլոր ջահլի-
ներդ: Էհէ-հէ... Մի լաւ մտիկ տայիք հին
ժամանակին — այնտեղից ամեն բան կհաս-
կանայիք... Բայց այ դուք մտիկ չէք տալիս
հին ժամանակին, և դրանից է, որ չէք կարո-
ղանում ապրել... միթէ՞ ես չեմ տեսնում
կեանքը: Օ՛րի, ամեն ինչ տեսնում եմ, թէ-
կուզ վատ էլ են աչքերս! Եւ տեսնում եմ ես,
որ մարդիկ չեն ապրում, այլ միշտ այսպէս են
փորձում, այնպէս են փորձում յարմարել և
իրանց ամբողջ կեանքը դրա վրայ են դնում:
Եւ երբ իրանք իրանց կկողոպտեն կպրծը-
նեն՝ վաանելով ժամանակը, կսկսեն լալ ի-
բանց բախտի վրայ: Ախր ինչացո՞ւ է այդտեղ
բախտը: Ամեն տեսակ մարդ եմ տեսնում
հիմա, բայց այ ուժեղներ չկան: Ապա ո՞ւր
են նրանք... Գեղեցիկներն էլ քանի գնում՝
քշանում են:

Պառաւը՝ մտածմունքի տակ ընկաւ այն
բանի մասին, թէ կեանքից ո՞ւր են կորել կո-
րովի և գեղեցիկ մարդիկ, և մտածելով դի-
տում էր մութ դաշտավայրը՝ ասես նրանում
պատասխան որոնելով:

Ես սպասում էի նրա զըրոյցին և սուս էի կացել՝ վախելով, որ եթէ ես նրան որևէ մի խօսք հարցնեմ, նա կրկին կգրաւի կոմնակի բանով: Ես գիտէի, որ երբ նա ուղղւում է իր յիշողութիւնների մըրկայոյ ծովը, այդ ծովը նրան փիլիսոփայութիւն է ներշնչում, և յաճախ պատահում էր, որ այս կամ այն լեզենդի վերջաւորութիւնը ոչնչանում էր այդ փիլիսոփայութեան ճնշման տակ, ազատ ու պարզ փիլիսոփայութիւն, սակայն որը պառաւ Իգերգիլի արտայայտութեամբ ներկայացնում էր բազմերանգ թիւերի մի տեսակ տարօրինակ կծիկ, որը խորագետութեամբ մճճել էր ժամանակը:

Եւ ահա նա սկսեց պատմել.

«Հին ժամանակ աշխարհիս երեոին ապրում էին մի տեսակ մարդիկ, թէ սրտեղ—չբգիտեմ: Միայն գիտեմ, որ այդ մարդկանց բանակները շրջապատում էին երեք կողմից անանցանելի անտառներ, իսկ չորրորդից— դաշտավայր էր: Դրանք ուրախ, ամբախազ ու խիզախ մարդիկ էին, շատ բան չցանկացող... Եւ ահա մի անգամ եկաւ մի ծանր ժամանակ. ինչ-որ մի տեղից յայտնեցին ուրիշ ցեղեր և՛ առաջնաններին քշեցին անտառի խորքը: Այնտեղ ճահիճներ էին ու խաւար, որովհետև անտառը շատ հին էր, և նրա ծառերի ճղներն այնպէս խիստ էին հիւսել, որ նրանց արանքով չէր երկում երկինքը, և

արևի շողերը հազիւ էին կարողանում խիստ սաղարթի միջով իրանց համար ճանապարհ բանալ դէպի ճահիճը: Իսկ երբ նրա շողերն ընկնում էին ճահիճների ջրի վրայ, այն ժամանակ էլ բարձրանում էր գարշահոտութիւն, և մարդիկ նրանից կոտորւում էին մինը միւսի յետևից: Այն ժամանակ սկսեցին այդ ցեղի կիներն ու մանուկները լաց լինել, իսկ հայրերը մտքի տակ ընկան ու սրտնեղեցին: Պէտք էր հեռանալ այդ անտառից, և դրա համար կար երկու ճանապարհ. մէկը՝ ետ,—այնտեղ էին դօրեղ ու շար թշնամիները, միւսն՝ առաջ,—այնտեղ կանգնած էին հսկայ-ծառերը՝ իրար կիպ գրկած հզօր ճղներով և խորը գցած իրանց հանգուցաւոր արմատները ճահճի կըպչուն սղմի մէջ: Այդ ծառերը ցերեկը կանգնած էին դորշ աղօտութեան մէջ լուռ ու անշարժ, ինչպէս քարէ, և այն մարդկանց աւելի կիպ էին շրջապատում երեկոներին, երբ վառւում էին խարոյկները: Եւ միշտ, գիշեր-ցերեկ, այդ մարդկանց շուրջը կար թունդ խաւարի մի օղ, որը կարծես պատրաստւում էր խեղդելու նրանց, սր սովոր էին դաշտային ընդարձակութեան ու լոյսի: Բայց աւելի սարսափելի էր լինում այն ժամանակ, երբ քամին հարւածում էր ծառերի կատարներն, ու ողջ անտառը խուլ դղրդում էր, ասես սպառնում ու մահերգ էր երգում այն մարդկանց համար, որոնք պատասպարել էին նրանում

թշնամիներէց: Դրանք՝ որքան էլ չլինի՝ ու-
 ժեղ մարդիկ էին և կկարողանային զնալ
 ճակատամարտել մահացու կերպով նրանց հետ,
 որ մի անգամ իրանց յաղթել էին, բայց նը-
 րանք չէին կարող մեռնել ճակատամարտերում,
 որովհետև կտակներ ունէին, և եթէ որ մեռ-
 նէին, այն ժամանակ նրանց հետ կկորչէին
 կեանքից և՛ այն կտակները: Ուստի և նրանք
 նստում ու մտածում էին երկար գիշերներն
 անտառի խուլ ազմուկի տակ, ճահճի թունա-
 ւոր գարշահոտութեան մէջ: Նրանք նստում
 էին, իսկ խարոյկներից առաջացած սոււերնե-
 րը նրանց շուրջն անմուռնչ պար էին սար-
 քում, և ամենքին թւում էր, թէ այդ ոչ թէ
 սոււերներն են պարում, այլ հանդէս են սար-
 քել անտառի ու ճահճի շար ոգիները.. Մար-
 դիկ հէնց էն է նստում ու մտածում էին:
 Բայց ոչինչ—ո՛չ աշխատանքը, ո՛չ կիները—
 չեն մաշում մարդկանց մարմիններն ու հոգի-
 ներն այնպէս, ինչպէս մաշում են վշտոտ խո-
 հերը, որ ծծում են սիրան օձերի նման: Եւ
 մարդիկ թուլացան խոհերից... Նրանց մէջ գո-
 յացաւ երկիւղ, շղթայեց նրանց ամուր ձեռ-
 ները, կիները զարհուրանք առաջացրին իրանց
 լացով՝ գարշահոտութիւնից մեռած դիակնե-
 րի և ահից կաշկանդուած կենդանի մարդկանց
 վիճակի վրայ,—և անտառում սկսեցին լսել
 անաբի խօսքեր, նախ երկշոտ ու մեղմ,
 իսկ յետոյ աւելի ու աւելի բարձր... Արդէն

ուզում էին զնալ թշնամու մօտ և նրան
 նւէր բերել իրանց և իրանց աղատ կամքը,
 ոչ որ արդէն՝ մահից ահաբեկուած՝ չէր վա-
 խում սարկական կեանքից... Բայց այդտեղ
 լայս ընկաւ Դանկօն և մենակ վրկեց ա-
 մենքին»:

Երևում էր, որ պառաւր յաճախ էր պատ-
 մել Դանկօի վառուղ սրտի մասին. ֆրագնիւրը
 դուրս էին գալիս երկար ու հարթ ժապաւէնի
 պէս: Նա խօսում էր երգաձայն, և նրա ձայ-
 նը՝ ճոճուան ու խուլ՝ պարզ պատկերացնում
 էր իմ առաջ այն անտառի աղմուկը, որի մէջ
 ճահճի թունաւոր ժահահոտութիւնից մեռնում
 էին դժբախտ, հալածուած մարդիկ...

«Դանկօն—դա այն մարդկանցից մէկն
 էր, մի ջահիլ գեղեցիկ մարդ: Գեղեցիկները
 միշտ խիզախ են: Եւ ահա նա ասում է նրանց,
 իր ընկերներին.

—«Միտք անելով չենք կարող գլորւող
 քարի ճանաչարհը ծուկ: Ով ոչինչ չէ անում,
 նրան ոչինչ չի վինիլ: Ի՞նչ ենք մենք ոյժներս
 վատնում մտածմունքի ու վշտի վրայ: Վեր
 կացէք, զնանք անտառը և անցնենք նրա մի-
 ջից, նա մի ծայր հօ կունենայ—աշխարհումս
 ամեն բան ծայր ունի: Գնանք: Ապա,
 չէ՛յ...»

«Նայեցին նրան ու տեսան, որ նա ամե-
 նից լաւն է, որովհետև նրա աչքերում փայ-
 ւում էր շատ ոյժ ու կենդանի կրակ:

— «Առաջնորդիր դու մեզ», — ասացին նրանք:

«Այն ժամանակ նա առաջնորդեց...»

Պառաւր շտեղ ու նայեց դաշտավայրին ուր քանի գնում՝ Թանձրանում էր խաւարը, Դանկօի վառուղ սրտի կայծերը բռնկում էին հեռու մի տեղ և Թւում էին օդային կապոյտ ծաղիկներ՝ միայն մի ակնթարթի համար ծաղկած:

«Առաջնորդեց նրանց Դանկօն: Ամենքը համերաշխ գնացին նրա յետեւից—հաւատ ունէին նրա վրայ: Դա մի դժւար ճանապարհ էր: Մութ էր, և իւրաքանչիւր քայլափոխում ճահիճը բաց էր անում իր ժանտ անյագ երակը՝ կլանելով մարդկանց, և ծառերը կտրում էին ճանապարհը զօրաւոր պատի նման: Խըճճէլ էին նրանց ճղներն իրար հետ որպէս օձեր, տարածւել էին ամեն կողմ արմատները, և իւրաքանչիւր քայլը շատ արիւն-քըլտինը էր նստում այդ մարդկանց վրայ: Նրանք երկար ժամանակ գնում էին .. Անտառը քանի գնում՝ խաւանում էր, ոյժերը քանի գնում՝ նւաղում էին: Եւ ահա նրանք սկսեցին տրանջալ Դանկօի վրայ՝ ասելով, որ դուր է նա՝ ջահիլ ու անփորձ՝ բերել նրանց ինչ-որ մի տեղ: Իսկ նա գնում էր նրանց առջևից և աշխոյժ ու պայծառ էր:

«Բայց մի անգամ մըրիկ վեր կացաւ անտառի վրայ, և ծառերը սօսաւեցին խուլ ու

սպաննազին: Եւ այն ժամանակ անտառն այնպէս մթնեց, որ կտես թէ նրա մէջ էին ժողովել միանգամից բոլոր գիշերները, որքան որ եղել է աշխարհիս երեսին այն ժամանակահանից, երբ նա գոյացել է: Դնում էին փորձարդիկը մեծ-մեծ ծառերի ու շանթի խրոխտ աղմուկի միջով, գնում էին նրանք, և հսկայ-ծառերը ճօճւելով՝ ճոճում ու որոտացընում էին զայրազին երգեր, իսկ կայծակները թռչելով անտառի ծառակատարների վրայով՝ լուսաւորում էին նրան մի վայրկեան կապոյտ, սառ կրակով ու անյայտանում նոյնպէս արող, ինչպէս յայտնում էին՝ մարդկանց վախեցնելով: Եւ ծառերը լուսաւորւած կայծակի սառը կրակով՝ Թւում էր՝ թէ կենդանի են, խաւարի գերութիւնից հեռացող մարդկանց շուրջն են տարածում իրանց ծուռումուռ, երկար ձեւերը՝ նրանցից հիւսելով մի խիտ ցանց և աշխատելով կանգնեցնել մարդկանց: Իսկ ճղների խաւարի միջից ինչ-որ սարսմփիկի, մութ ու սառը մի բան էր նայում ընթացողներին: Դա դժւար ճանապարհ էր, և մարդիկ նրանից յոգնած՝ յուսահատուել էին. Բայց նրանք ամաչում էին խոստովանել իրանց անզօրութիւնը, և ահա իրանց չարութիւնն ու շայրոյթը թափեցին Դանկօի վրայ, այն մարդի, որը գնում էր նրանց առջևից: Եւ սկսեցին նրանք մեղադրել նրան իրանց կառավարել չկարողանալու համար,— այ թէ ինչ:

«Կանգ առան նրանք և անտառի յաղթական աղմուկի տակ, դողացող խաւարի մէջ յողնած ու շար՝ սկսեցին դատել Դանկօնի:

— «Դու,—ասացին նրանք,— չնչին մի նաստակաւ մարդ ես մեզ համար: Դու մեզ առաջնորդեցիր ու յողնեցրիր և դրա համար դու կմեռնես:

«Եւ շանթն ու որոտը հաստատեցին նրանց վճիռը:

— «Դուք ասացիք՝ «առաջնորդիր»—էս եր առաջնորդեցի,—գոչեց Դանկօն՝ կուրծքը նրանց դէմ անելով:—Ես արիւթիւն ունեմ արուստի և ահա՛ ձեզ առաջնորդեցի: Իսկ դուք: Դուք ինչ արիք ձեզ ստատար լինելու համար: Դուք միայն գնում էիք և չէիք կարողանում արիւթիւն պահպանել աւելի երկար ճանապարհի համար: Դուք միայն գնում էիք, գնում էիք ձեզ ու ձեզ՝ ինչպէ՛ մաքրիների հօտ:

«Իայց այս խօսքերն աւելի՛ ևս կատարեցրին նրանց:

— «Դու կմեռնես: Դու կմեռնես, մաքրի՛ չում էին նրանք:

«Իսկ անտառն անդադար թնդում էր համ թնդում՝ կրկնելով նրանց գոչիւնները, և շանթի բերը պատառ-պատառ էին անում խաւարը Դանկօն նայում էր նրանց, որոնց սիրտն զժւար աշխատանք էր յանձն առել, և տեսնում էր, որ նրանք գազանների պէս են: Նրա

ջը շատ մարդ էր կանգնած, բայց նրանց երբին չկար վեհանձնութիւն, և չէր կարեթրանցից զթութիւն սպասել: Այն ժամանակ նրա սրտում էլ եռաց ցատումը, բայց դէմարդիկն ունեցած խղճահարութիւնից գաւ այն: Նա սիրում էր այդ մարդկանց տածում էր, որ գուցէ առանց իրան կընեն նրանք: Եւ ահա նրա սիրտը բռնկեցին փրկելու և դիրքին ճանապարհը դուրս ելու վտու կրակից, և այն ժամանակ նրա սրտում շողացին այդ մեծագոր կրակի ճապաթները... Եւ նրանք տեսնելով այդ՝ ձեցին, թէ նա կատաղել է, որից և այդպէս պայծառ վառեցին նրա աչքերը, և նրա սկսեցին զգուշանալ՝ ինչպէս գայլեր՝ ասելով, որ նա մարտնչելու է նրանց հետ, աւելի կիս շրջապատեցին նրան, որպէսզի անց համար հեշտ լինի բռնել ու սպանել նկօն: Իսկ նա արդէն հասկացել էր նրանց որքը, ուստի և աւելի պայծառ վառեց նրա սրտը, որովհետեւ նրանց այդ միտքն առաջ բերել նրա մէջ վիշտ:

«Իսկ անտառն անդադար երգում էր իր ալլ երգը, և որոտը թնդում անընդհատ, և ձրկ էր թափւում...

— «Ի՞նչ կարող եմ անել եո մարդկանց մար,—որոտից աւելի ուժգին գոչեց Դանկօն:

«Եւ յանկարծ ձեռներով նա պատուեց իր լրծքը և հանեց նրանից իր սիրտն ու բարձը:

բացրեց այն իր գլխից վեր:

«Եւ նա վառվում էր այնպէս լուսաւում ծառ, ինչպէս արեւը, արեւից էլ պայծառերէր ամբողջ անտառը լռեց՝ լռեցի մարդիկ ոսկու նման... Երեկոյ էր, և արեւմուտքի ծած մեծ սիրոյ այդ ջահով լուսաւորւած, հագայթներից գետը թւում էր կարմիր, խաւարը ցրեց նրա լոյսից և այնտեղ՝ խլիս այն արիւնը, որ ջերմ հոսանքով խփում անտառում գողգողալով ներս ընկաւ ճախանիօի պատուած սրտից: Ժահահոտ երախը: Իսկ մարդիկ հիացած էին կարել:

— «Գնանք,— գոչեց Գանկօն, և ներս առաջ իր տեղը՝ բարձր բռնած վառուղ սիրտ երկրի վրայ և հպարտ ծիծաղեց: Իսկ լուսաւորելով նրանով մարդկանց ճանապարհոյ ընկաւ ու մեռաւ:

«Նրանք նեւեղեցին նրա յետևից՝ հեռու քրքրւած ու կախարդւած: Այն ժամանակ ըրից անտառն աղմկեց՝ զարմացած ձօճի ծառակատարները, բայց նրա աղմուկը խլեց վաղուց մարդկանց ոտների թմփթմփտումներն էին վաղում արագ ու համարձակ յափշտակւած վառուղ սրտի հրաշալի տարանով: Այժմ էլ էին կոտորւում, սակայն տորւում էին առանց գանգատների ու արցունքի: Իսկ Գանկօն առջևն էր միշտ, և սիրտը վառւում էր հս վառւում:

«Եւ ահա յանկարծ անտառը ետ քաշեց նրանց առաջից, ետ քաշեց ու ետ մղեց կիս ու համբ, իսկ Գանկօն ու բոլոր այն մարդիկ յանկարծ ընկղմւեցին արեգակային լուսամբողջ ծովի ու ջրինջ, անձրևից լւացւած մէջ: Մրբիկ էր այնտեղ, նրանց յետևում,

ի վրայ, իսկ այստեղ փայլում էր արեւը, փայլում էր դաշտավայրը, փայլում էր խոտը ազամանդներով, և գետը շողշողում էր, և արեւմուտքի գետը թւում էր կարմիր, խաւարը ցրեց նրա լոյսից և այնտեղ՝ խլիս այն արիւնը, որ ջերմ հոսանքով խփում անտառում գողգողալով ներս ընկաւ ճախանիօի պատուած սրտից: Ժահահոտ երախը: Իսկ մարդիկ հիացած էին կարել:

«Հայեացք գցեց իր առաջ՝ դաշտավայրի արձակութեանը՝ հպարտ, մեռնող քաջատ Գանկօն, ուրախական հայեացք գցեց նա երկրի վրայ և հպարտ ծիծաղեց: Իսկ լուսաւորելով նրանով մարդկանց ճանապարհոյ ընկաւ ու մեռաւ:

«Մեղմ շշնջում էին զարմացած ծառերը, նր յետևն էին մնացել, և խոտը, որ թրջւել էր Գանկօի արիւնով, ճայնակցում էր նրանց: «Իսկ մարդիկ ուրախ և լի յոյսերով՝ շքեղեցին նրա մահը և չտեսան, որ դեռ վաղում է Գանկօի դիակի մօտ նրա խիզախ սրտը: Միայն մի զգոյշ մարդ նկատեց այդ խախտումը ինչ-որ մի բանից՝ ոտը դրաւ սրտին... Եւ ահա նա ցրիւ գալով ու ցածր դառնալով՝ մարեց...»

— Այ թէ որտեղից են նրանք, դաշտավայրի կապուտակ կայծերը, որոնք յայտնւում մրբիկեց առաջ:

* *

Այդ ժամանակ, երբ պառուը վերջացրեց գեղեցիկ հեքիաթը, դաշտավայրում տիրեց

խաղաղութիւն, կասես նա էլ էր ապշած քա-
 ջարի Դանկօի ուժից, որը մարդկանց համար
 վառեց իր սիրան ու մեռաւ՝ նրանցից ոչ մի
 պարզև չխնդրելով իր համար: Մէջքը դէմ
 տւած խաղաղով լի կողովին՝ պառաւը նիրհում
 էր: Ես նայում էի նրան ու մտածում. դեռ սր-
 բան հէքիաթներ ու յիշատակներ են մնացել
 նրա յիշողութեան մէջ: Եւ մտածում էի Դան-
 կօի վառող մեծ սրտի և մարդկային ֆանտա-
 ղիայի մասին, որ ստեղծել է այդքան գեղեցիկ
 ու ազդու լեզենդներ, նախնի ժամանակի մա-
 սին, որում կային հերոսներ և սխրագործու-
 թիւններ, և տխուր ժամանակիս մասին, ազ-
 քատ՝ կորովի մարդկանցով ու խոշոր դէպքե-
 րով, հարուստ՝ ամեն բանի վրայ ծիծաղող սա-
 ուրն անվստահութեամբ, — ի ծնէ մեռած սրտե-
 րով սղորմելի մարդկանց ժամանակիս մասին:

Քամին փչեց և ցնցոտիների տակից մեր-
 կացրեց՝ աւելի ու աւելի խորը քնող պառաւ
 Իգերգիլի շոր կուրծքը: Ես ծածկեցի նրա ծեբ
 մաւրմիւր և ինքս պառկեցի գեանին նրա մօտ:
 Դաշտավայրում խաղաղ ու մութ էր: Երկնքով
 էի սողում էին ամպերը, դանդաղ, ձանձրալի...
 Ծովն աղմկում էր խուլ ու վշտագին:



ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. ԹԱԹԱՄՄԱՆ ԳԻՉԵՐԸ, Լէօի, գինը . . . 5 կ.
2. 26 ՏՂԱՄԱՐԳ ԵՒ 1 ԱՂՋԻԿ, Մակ-
սիմ Գօյրկու, թարգ. Մուշէ վ. . . 5 կ.
3. ԽԵՆԹԸ և ուրիշ պատմածքներ,
Վ. Փափազեանի . . . 10 կ.
4. ԿԵԱՆՔԻ ԴԱՄԸ, պատմածք
Ա. Ահարոնեանի . . . 5 կ.
5. ՍՊԻՏԱԿ ԽԱՂԻԿԸ Է. Օթէշկոյի
Թարգ. Չահվերդեանի . . . 5 կ.
6. ԱՐՏԻՍՏԸ ՉԻՐՎԱՆՆԵՐ . . . 15 կ.
7. ԵՂՕՅԻ ՔՈՌ ԲԱՍՏԸ Չահրիարի 3 կ.
8. ԵԱՊՕՆԻԱ Խաչատրեանի . . . 3 կ.
9. ԳԱՆԿՕՒ ՍԻՐՏԸ Թ. Ա. Աթայեանի 3 կ.

ան
|||

« Ազգային գրադարան



NL0316240

10.673